Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
հոկտեմբերի 4-ի N 1275 -Ա որոշման

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ՕԴՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն համաձայնագիրը կնքված է 2012 թվականի _____ ին, Երևան քաղաքում, Հայաստանի Հանրապետություն, հետևյալ կողմերի միջև՝

(1) Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ կառավարություն),
(2) «ԱՐՄԱՎԻԱ» ավիաընկերություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՀՀ, քաղ. Երևան, 0042, «Զվարթնոց» օդանավակայան) (այսուհետ՝ Արմավիա):

Հաշվի առնելով, որ՝

Ա) Կառավարությունը, Սիբիր ավիաընկերությունը և Արմավիան 2003 թվականի մարտի 14-ին կնքել են ներդրումային պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր), որի N 1 հավելվածի համաձայն յուրաքանչյուր օրացուցային տարի, սկսած 2004 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի հունվարի 1-ից սկսվող օրացուցային տարին (ներառյալ), Արմավիան պարտավոր է տարեկան կառավարությանը վճարել 1 000 000 ԱՄՆ-ի դոլար,

Բ) 1993 թվականի մարտի 12-ին Մինսկ քաղաքում ստորագրված «Հաշմանդամների և Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների, ինչպես նաև նրանց հավասարեցված անձանց արտոնյալ երթևեկության իրավունքի փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագրի պահանջներին համապատասխան Արմավիան, որպես օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպություն, ապահովում է համաձայնագրով նախատեսված անձանց կատեգորիաների անվճար և (կամ) զեղչով օդային տրանսպորտով երթևեկության իրավունքի իրականացումը,

Գ) Կառավարությունն ստանձնել է կարգավորելու Արմավիայի կողմից արտոնյալ պայմաններով երթևեկության ապահովման հետ կապված՝ Արմավիայի կատարած ծախսերի հատուցման խնդիրները,

Կողմերը համաձայնվեցին հետևյալի շուրջ՝

1. Սույնով կողմերը պայմանագրում կատարում են հետևյալ փոփոխությունները՝

1.1 Պայմանագրի N 1 հավելվածի «Գ» կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գ. Յուրաքանչյուր օրացուցային տարի, սկսած 2004 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի հունվարի 1-ից սկսվող օրացուցային տարին (ներառյալ), Արմավիան պարտավոր է տարեկան կառավարությանը վճարել 1.000.000 ԱՄՆ-ի դոլար, ընդ որում,

ոչ ուշ, քան նախքան տվյալ տարվա դեկտեմբերի վերջին բանկային օրը, իսկ 2013 թվականի օրացուցային տարվա համար՝ 800.000 ԱՄՆ-ի դոլարը մինչև տարվա վերջին բանկային օրը, իսկ 200.000 ԱՄՆ-ի դոլարը՝ ոչ ուշ, քան 2014 թվականի ապրիլի 20-ը:»:

1.2 Պայմանագրի N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «Դ» կետով.

«Դ. ՀՀ օրենքների, այլ իրավական ակտերի ու միջազգային պայմանագրերի համաձայն օդային ուղևորատար տրանսպորտով առանձին խմբերի քաղաքացիներին զեղչ սակագներով կամ անվճար փոխադրումներ իրականացնելու հետևանքով չստացված եկամուտների գումարի չափով օրենքով սահմանված շահութահարկի գումարի նվազեցման անհնարինության դեպքում սույն հավելվածի «Գ» կետով նախատեսված յուրաքանչյուր օրացուցային տարվա համար տվյալ տարվա դեկտեմբերի վերջին բանկային օրվա դրությամբ վճարման ենթակա ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ գումարը նվազեցվում է նախորդ օրացուցային տարվա ընթացքում զեղչ սակագներով կամ անվճար փոխադրումներ իրականացնելու հետևանքով շահութահարկից չնվազեցված եկամուտների չափով:»:

2. Սույն համաձայնագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը, և սույն համաձայնագրով չնախատեսված դրույթները կարգավորվում են պայմանագրի դրույթներով:

ՀՀ կառավարության անունից

_____

Արմավիայի անունից

_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ